Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2019 թվականի
դեկտեմբերի 13-ի N 1642-Ա հրամանի

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության կատարմանն ուղղված 2020 թվականի (IV եռամսյակ) միջոցառումների իրականացման ընթացքի մասին

	Գործողության անվանումը	Գործողության կատարման ընթացքը	Գործողության արդյունքը (առկայության դեպքում՝ թվային ցուցանիշներով)	Հատուկ նշումները
1.	Մշակել գյուղատնտեսական նշանակության հողերի թվայնացված աշխարհագրական քարտեզներ	Գործողությունը նախատեսվում է իրականացնել 2021 թվականից:	Գյուղատնտեսական նշանակության հողերի ճշգրտված թվայնացված քարտեզ	
2.	Կարգավորել հողերի խոշորացման իրավական դաշտը և իրականացնել կառուցակարգի ներդրման ծրագիր	ՀՀ կառավարության 2020 թվականի հունվարի 23-ի N 68-Լ որոշմամբ հաստատվել է «Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգը և միջոցառումների ծրագիրը»: Մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «ՀՀ հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որին հավանություն է տրվել ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 17-ի N 1534–Ա որոշմամբ: Օրենքի նախագիծը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: Մշակվել է գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման մասին ՀՀ օրենքի նախնական տարբերակը (անգլերեն և հայերեն), որը 2020 թվականի սեպտեմբերի 26-ին քննարկվել է ՀՀ վարչապետի մոտ տեղի ունեցած հողային բարեփոխումների վերաբերյալ խորհրդակցության ժամանակ: Վերջնական քննարկումից հետո կտրվի համապատասխան ընթացք:	Օրենքի նախագծի նախնական տարբերակ	

	Գործողության անվանումը	Գործողության կատարման ընթացքը	Գործողության արդյունքը (առկայության դեպքում՝ թվային ցուցանիշներով)	Հատուկ նշումները
3.	Ստեղծել Գյուղատնտեսական վարկերի երաշխիքային հիմնադրամ և զարգացնել կարողությունները	Ծրագրի որոշման նախագիծը ներկայացվել է 6 մասնագիտական վարչություններ կարծիք ստանալու նպատակով: Արդյունքում կազմվել է առաջարկներից կազմված տեղեկանք և ներկայացվել է Գյուղական ֆինանսավորման կառույցին, վերջինիս կողմից ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ա. Խոջոյանին է ներկայացվել նախագծի լրամշակված տարբերակը և ներկայումս գտնվում է քննարկման փուլում:	Ծրագիրը հնարավորություն կնձեռի Գյուղական ֆինանսավորման կառույցին երաշխավորելու մասնակից ֆինանսական կառույցների հանդեպ շահառուի ունեցած վարկային պարտավորությունը չբավարարող գրավի կամ վարկի ապահովվածության չափով, սակայն ոչ ավել քան վարկի գումարի 50 %՝ առավելագույնը 7 մլն դրամ:	
4.	Ներդնել գյուղատնտեսության ապահովագրության համակարգ	Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագրի շրջանակներում ապահովագրվում են ծիրանի, դեղձի, խնձորի և խաղողի այգիները և հացահատիկային մշակաբույսերի (աշնանացան/ գարնանացան ցորեն և գարի, վարսակ) ցանքատարածությունները, 2 ռիսկերից՝ կարկուտ և հրդեհ, գարնանային ցրտահարություն: Կարկուտ և հրդեհ ռիսկից ծիրանի և խաղողի ապահովագրությունն ընդգրկում է 6 մարզ՝ Արմավիր, Արարատ, Արագածոտն, Տավուշ, Կոտայք, Վայոց ձոր, իսկ դեղձի, խնձորի և հացահատիկային մշակաբույսերի (աշնանացան/ գարնանացան ցորեն և գարի, վարսակ) ապահովագրությունը՝ ՀՀ բոլոր մարզերը: Գարնանային ցրտահարություն ռիսկից ծիրանի, խաղողի ու դեղձի ապահովագրությունը ընդգրկում է Արմավիրի և Արարատի մարզերը: Ծրագրի շրջանակներում իրականացվում է ապահովագրա-վճարի առնվազն 50-60 %-ի սուբսիդավորում:	2020 թվականի մայիսի 15-ին ավարտվել է 2020 թվականի գյուղատնտեսական տարվա համար ապահովագրական պայմանագրերի կնքման ժամկետը: Արդյունքում՝ Գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային գործակալության կողմից տրամադրած տեղեկատվության համաձայն միայն 2020 թվականի ընթացքում ապահովագրական ընկերությունների կողմից փաստացի վաճառվել է 1541 ապահովագրական պայմանագիր (ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսը կազմել է 2345 հա): Կնքված պայմանա-գրերի	

	Գործողության անվանումը	Գործողության կատարման ընթացքը	Գործողության արդյունքը (առկայության դեպքում՝ թվային ցուցանիշներով)	Հատուկ նշումները
			արդյունքում պետության կողմից սուբսիդավորված գումարը կազմել է շուրջ 69.0 մլն ՀՀ դրամ: 2020թ. նոյեմբերի 30-ի դրությամբ ապահովագրական պատահարների հետևանքով ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվել է 300 ապահո-վագրական հատուցում՝ 151 298 031 դրամի չափով:	
5.	Մշակել և ներդնել հակա-կարկտային արդյունավետ համակարգ	Մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ուղարկվել վարչապետի որոշման նախագիծ՝ միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու վերաբերյալ:		
6.	Իրականացնել գյուղատն-տեսության գերակա արժեշղթաների վերլուծություն	Գյուղատնտեսության գերակա արժեշղթաների վերլուծության իրականացման նպատակով Էկոնոմիկայի նախարարությունը դիմել է ՀՀ կառավարության, «Մանուկյան Սիմոն» հիմնադրամի, Շվեդիայի արտաքին գործերի նախարարության և Հայաստանի ամերիկյան համալսարանի համագործակցությամբ ստեղծված «Մանուկյան Սիմոն» հիմնադրամին և ստացել վերջինիս հավանությունը: Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և ներկայացվել է միջոցառման իրականացման տեխնիկական առաջադրանքը:	Միջոցառման շրջանակներում միջազգային փորձի ուսումնասիրություն	
7.	Նախաձեռնել գյուղատն-տեսական տեխնիկայի լիզինգի մասին ՀՀ օրենքի նախագծի մշակում	ՀՀ-ում լիզինգի՝ որպես այլընտրանքային ֆինանսական գործիքի զարգացման նպատակով նախարարության կողմից մշակվել է իրավական ակտերի նախագծերի փաթեթ, որով կարգավորվում, պարզեցվում և հստակեցվում է լիզինգին առնչվող քաղաքացիաիրավական և հարկային հարաբերությունները:	Ֆինանսական վարձակալության՝ լիզինգի բնագավառում օրենսդրական բացերի կարգավորում և գործընթացի հստակեցում	

	Գործողության անվանումը	Գործողության կատարման ընթացքը	Գործողության արդյունքը (առկայության դեպքում՝ թվային ցուցանիշներով)	Հատուկ նշումները
		Փաթեթը քննարկվել է Կառավարությունում և հավանության է արժանացել 13.02.2020թ. N 167-Ա Կառավարության որոշմամբ: Նույն որոշման համաձայն օրենսդրական փոփոխությունների նշված փաթեթը սահմանված կարգով ներկայացվել է Ազգային Ժողով: Օրենսդրական փաթեթն 2020թ. հուլիսի 18-ին ընդունվել է Ազգային ժողովի կողմից (ՀՕ-316-Ն, ՀՕ-317-Ն, ՀՕ-318-Ն, ՀՕ-319-Ն, ՀՕ-320-Ն, ՀՕ-321-Ն):		
8.	Բարելավել սերմերի և տնկանյութերի հավաստա-գրման համակարգը	Էկոնոմիկայի նախարարի 2020թ. օգոստոսի 8-ի 1079-Ա հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ «Սերմերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի վերջնական լրամշակման աշխատանքները մինչև սույն թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակն ավարտելու նպատակով: Մշակվել է «Սերմերի և տնկանյութի մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որը ներկայացվել է պետական կառավարման մարմիններ կարծիքի:		
9.	Աջակցել թռչնաբուծարանների և անասնապահական տոհմաբուծական տնտե-սությունների հիմնմանը	Համագործակցություն է իրականացվում «Հայաստանի թռչնաբույծների միություն» ՀԿ-ի հետ: Աշխատանքներ են տարվում ներգրավելու ներդրողներ արտերկրից՝ նպատակ ունենալով հիմնելու բրոյլերների արտադրություն: ՀՀ կառավարության 2020թ. 356- Լ որոշմամբ թռչաբուծության նպատակով տրամադրվել են 0% տոկոսադրույքով,մինչև 3 տարի մարման ժամկետով վարկեր՝ 30% համաֆինասավորման գործիքի կիրառմամբ:		
10.	Ներդնել HACCP (վտանգի վերլուծության և կրիտիկական կետերի հսկում) ստանդարտը	Նշված միջոցառումը պետք է իրականացվի միջազգային փորձագետների անմիջական մասնակցությամբ: Հաշվի առնելով 2020 մարտ ամսից ամբողջ աշխարհում նոր կորոնավիրուսային (COVID-19) հիվանդության ծանր համաճարակային իրավիճակով պայմանավորված		

	Գործողության անվանումը	Գործողության կատարման ընթացքը	Գործողության արդյունքը (առկայության դեպքում՝ թվային ցուցանիշներով)	Հատուկ նշումները
		համավարակը՝ հնարավոր չի եղել ապահովել միջազգային փորձագետների ներգրավումն ու մասնակցությունը տվյալ միջոցառման իրականացման համար: Հարկ է նշել նաև, որ HACCP (վտանգի վերլուծության և կրիտիկական կետերի հսկում) ստանդարտի ներդրումը ենթադրում է նաև տնտեսվարողների կողմից զգալի ֆինանսական ծախսեր, որը համավարակով և պատերազմական դրությամբ ստեղծված տնտեսական ծանր պայմաններում լրացուցիչ ֆինանսական բեռ կլինի վերջիններիս համար: Հետևապես, այս միջոցառումը նախատեսվում է իրականացնել նոր կորոնավիրուսային (COVID-19) հիվանդության համաճարակային իրավիճակի և պատերազմական դրությամբ պայմանավորված տնտեսական ծանր իրավիճակի կայունացումից հետո:		
11.	Գյուղատնտեսական կենդանիների համարակալման և նույնականացման ծրագրի մշակում	«ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 11-ի N 954-Ն որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում, ականջապիտակների, սեղմիչ աքցանների և գրասենյակային գրքերի գնման գործընթացները կազմակերպելու նպատակով, ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել են դրանց տեխնիկական բնութագրերը, որից ելնելով, խոշոր եղջերավոր կենդանիների ականջապիտակների ձեռքբերման նպատակով, «Գնումների մասին» ՀՕ-21-Ն ՀՀ օրենքով սահմանված կարգով հայտարարվել էր ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-20/59 ծածկագրով մրցույթ: ՀՀ վարչապետի 2020 թվականի սեպտեմբերի 29-ի N 02/16.10/45417-2020 հանձնարարականից ելնելով՝ առաջարկվել է վերոնշյալ մրցույթը հայտարարել չկայացած:		

	Գործողության անվանումը	Գործողության կատարման ընթացքը	Գործողության արդյունքը (առկայության դեպքում՝ թվային ցուցանիշներով)	Հատուկ նշումները
12.	Մշակել և իրականացնել վարակիչ բրուցելյոզի կանխարգելման և վերացման ծրագրեր	ՀՀ-ում խոշոր եղջերավոր կենդանիների համարակալման և հաշվառման գործընթացի մեկնարկից հետո Բրուցելյոզի կանխարգելման և վերահսկման ծրագիրը կլրամշակվի և կներկայացվի շահագրգիռ մարմինների կարծիքի:		
13.	Ներդնել անասնաբուժական դեղամիջոցների շրջանառության վերահսկման կառուցակարգեր (հատկապես հակաբիոտիկների)	Մշակվել և ՀՀ էկոնոմիկայի նախարարի 17.04.2020թ. N 09.5.2/4687-2020 գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել ««Անասնաբուժու-թյան մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դեղերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Գործունեության իրականացման ծանուցման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի լրամշակված փաթեթը, որի ընդունման արդյունքում կմշակվի և ՀՀ վարչապետի աշխատակազմ կներկայացվի «ՀՀ-ում անասնա-բուժական դեղատնային գործունեության իրականացման լիցենզավորման կարգը, անասնաբուժական դեղատնային գործունեության իրականացման լիցենզիայի ձևերը» և «ՀՀ-ում դեղատոմսերի ձևերը, դեղատոմսեր գրելու, անասնաբուժական դեղամիջոցներ բաց թողնելու (ներառյալ՝ էլեկտրոնային եղանակով) կարգը» որոշումների նախագծերը, և արդյունքում կապահովի վերահսման կառուցակարգի շղթայի ևս մի քանի օղակ:		
14.	Որոշել չափորոշիչները, սահմանել անբարենպաստ տարածքները, կազմել դրանց քարտեզները և մշակել միջոցառումներ այդ	«Մանուկյան Սիմոն հետազոտական հիմնադրամի» դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում առաջարկվել է ընդգրկել այս միջոցառումը: Բացի այդ, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը նախաձեռնել է մշակել համապատասխան հարցաթերթիկներ՝ ընտրանքային		

	Գործողության անվանումը	Գործողության կատարման ընթացքը	Գործողության արդյունքը (առկայության դեպքում՝ թվային ցուցանիշներով)	Հատուկ նշումները
	տարածքների հետագա զարգացման համար	կարգով հանրապետության մարզերում և տարածաշրջաններում գյուղատնտեսության վարումից ստացվող եկամուտները գնահատելու նպատակով:		
15.	Ներդնել կաթի, խաղողի և այլ ապրանքների գնագոյացման նոր համակարգ, որը հիմնված կլինի որակական ստանդարտ-ների վրա	Գյուղատնտեսական հումքի /կաթի, խաղողի և այլն/ մթերման գնագոյացման համակարգի մշակումն ու ներդրման միջոցառման իրականացման նպատակով Էկոնոմիկայի նախարարությունը դիմել է Հարավային Կորեայի զարգացման հիմնադրամին, ստացվել է վերջինիս հավանությունը և 2020թ. փետրվարին փորձագետների այց է եղել Հայաստան: Կաթի, խաղողի և այլ ապրանքների գնագոյացման նոր համակարգի ներդրման շրջանակներում 2020թ. նոյեմբերին մշակվել է համատեղ հետազոտական ծրագիր, ներկայացվել է ծրագրի Powerpoint տարբերակը: Ծրագրի մեկնարկի ակնկալվող ժամկետը 2021թ. առաջին եռամսյակն է:	Առաքելության ընթացքում իրականացվել է կարիքների գնահատում, տեղեկատվության փոխանցում, ինչպես նաև գնագոյացման նոր համակարգի մեխանիզմների մշակում:	
16.	Իրականացնել ժամանակակից մեծածախ շուկաների ստեղծման կարողությունների ուսումնասիրություն եւ ՊՄԳ միջոցով պիլոտային մեծածախ շուկայի ստեղծում	«Dalberg» խորհրդատվական ընկերության փորձագետների կողմից կատարվել է Հայաստանի համար մեծածախ շուկայի վերլուծություն և ներկայացվել է «Ժամանակակից մեծածախ շուկան Հայաստանում» ներդրումային ծրագիրը, որում ներառված է նախարարության կողմից մշակված մեծածախ շուկայի Հայաստանի համար նախընտրելի մոդելը: Համաձայն մշակված մոդելի՝ մեծածախ շուկան բացի մեծածախ վաճառքի համար հարթակների տրամադրումից, պետք է կատարի մեծածախ գնումներ, իրականացնի տեսակավորում, փաթեթավորում, սառնարանային պահպանություն, մատակարարում ինչպես տեղական առևտրային ցանցերին և սննդի ոլորտներին, այնպես էլ կատարի ուղիղ արտահանումներ և տեսակավորված խմբաքանակներ առաջարկի այլ արտահանողների: Տեսակավորումից հետո գոյացած առանձին	«Ժամանակակից մեծածախ շուկան Հայաստանում» ներդրումային ծրագրի առկայություն	

	Գործողության անվանումը	Գործողության կատարման ընթացքը	Գործողության արդյունքը (առկայության դեպքում՝ թվային ցուցանիշներով)	Հատուկ նշումները
		խմբաքանակները կարող է նաև վերամշակի կամ առաջարկի վերամշակող ընկերություններին:		
17.	Ներդնել արտադրանքի և շուկաների դիվերսիֆիկացման հնարավորությունների բարձրացման համար սննդամթերքի անվտանգության պահանջների և դրանց իրականացման համակարգ	Նշված միջոցառումն իրականացնելու համար անհրաժեշտ է միջազգային փորձագետների անմիջական մասնակցություն, մինչդեռ 2020թ. մարտից ամբողջ աշխարհում նոր կորոնավիրուսային (COVID-19) հիվանդության ծանր համաճարակային իրավիճակով պայմանավորված՝ հնարավոր չի եղել ապահովել վերջիններիս մասնակցությունը տվյալ միջոցառման իրականացմանը: Միաժամանակ, առաջարկվում է այս միջոցառումը միավորել HACCP (վտանգի վերլուծության և կրիտիկական կետերի հսկում) ստանդարտի ներդրման միջոցառման հետ, քանի որ վերջինիս իրականացումը կապահովի նաև արտադրանքի և շուկաների դիվերսիֆիկացման հնարավորությունների բարձրացման համար սննդամթերքի անվտանգության պահանջների և դրանց իրականացման համակարգի ներդրումը:		
18.	Մշակել «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի նախագիծ	Օրենքի նախագծի աշխատանքային տարբերակը քննարկվել է նախարարության համապատասխան ստորաբաժանումների հետ և ներկայացվել է ՀԱԱՀ կարծիքի, ինչպես նաև ներկայումս աշխատանքներ են գնում ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության միջազգային փորձագետների հետ:	Օրենքի նախագծի նախնական տարբերակ	
19.	Մշակել շուկայական գների վերաբերյալ տվյալների հավաքագրման, լրամշակման և տարածման կազմակերպված համակարգ	Կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված՝ նշված գործողությամբ աշխատանք դեռևս չի իրականացվել:		
20.	Նախարարության կազմում հիմնել գյուղատնտեսության	Գյուղական ֆինանսավորման կառույցի կողմից կազմվել է 2019 թվականի մարտի 21-ի 289-Ն որոշումը և ներկայացվել ՀՀ կառավարություն, սակայն 2020թ մարտի 18-ին	Նախագծով նախատեսվում էր դադարեցնել «Հայաստանում գյուղական տարածքների	

	Գործողության անվանումը	Գործողության կատարման ընթացքը	Գործողության արդյունքը (առկայության դեպքում՝ թվային ցուցանիշներով)	Հատուկ նշումները
	ոլորտի մեկ միասնական վճարային կառույց	կայացած ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի կողմից հանվել է օրակարգից:	տնտեսական զարգացման ԾԻԳ» ՊՀ-ի գործունեությունը դադարեցնել և գործառույթները վերապահել Գյուղական ֆինանսավորման կառույցին, ինչպես նաև այնտեղ կենտրոնացնել ֆինանսական և վճարային գործիքակազմը:	
21.	Թվային գյուղատնտեսությանն ուղղված ռազմավարության և գործողությունների պլան	Իրականացվել են թվային գյուղատնտեսության ռազմավարության և համապատասխան գործողությունների պլանի մշակման աշխատանքներ: Ըստ միջոցառումների ծրագրի՝ սահմանվել են առաջնահերթությունները:	Ծրագրի ընդունման արդյունքում շահառուների համար կստեղծվի պետական օժանդակության ծրագրերին առցանց դիմելու և դիմումներին հետևելու հնարավորություն:	
22.	Թվայնացնել գյուղատն-տեսական վիճակագրությունը՝ նախապես համակարգելով ՀՀ վիճակագրական կոմիտեի հետ (օրինակ՝ բաց գյուղատն-տեսական տվյալների աղբյուրների թվայնացում և հավաքագրում մեկ միասնական հարթակում, նոր թվային տվյալների արտահանման գործըն-թացների ներդրում՝ Կառավա-րության և հանրության համար տվյալների հասանելիության բարձրացում	Կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված՝ միջոցառման ուղղությամբ աշխատանքներ դեռևս չեն իրականացվել: Նախատեսվում է վերջիններս սկսել 2021 թվականից:		